05/13672-17
1/17.7/11433-17

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1204 -Ն

«11» 10 2017 թ. ք.Երևան

## ՋՐԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված հավելվածի 120-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված հավելված 1-ի 16-րդ կետի 1-ին ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ**

1. Սահմանել ջրափրկարարական աշխատանքների կատարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետին՝ սահմանված ժամկետում ու կարգով ապահովել սույն հրամանի ներկայացումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Դ.ՏՈՆՈՅԱՆ

CoSign

2017 թվականի________ «___»
ք.Երևան